ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> 09 2011թ. N: 333-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԶԱՎԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԶԱՎԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Զավեն Պետրոսյանի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2011 թվականի սեպտեմբերի 30-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Նոր Կյանքի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար Զավեն Պետրոսյանի լիազորությունները:

2. 2011 թվականի սեպտեմբերի 30-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Նոր Կյանքի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Զավեն Պետրոսյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է